14-ՐԴ ՆԻՍՏ

3 սեպտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկ[ոյան] ժամը 8-ից մի քանի րոպե պակաս:

Օրակարգի խնդիրներն էին.

1. Դպրոցական խնդիր.
2. Պատգամավորական օրապահիկի խնդիր.
3. Պարենավորման խնդիր.
4. Կառավարության պատասխանը Ս.-Դ. հարցապնդմանը:

Դպրոցական խնդրի վերաբերմամբ խոսք է խնդրում *պատգամավոր Զուբյանը*, հայտնելով, որ իր ֆրակցիան համաձայն է կոմիսիայի հետ, որ դպրոցում այժմ արմատական փոփոխություն չի կարելի մտցնել: Սակայն նա կանգ է առնում մի այլ հարցի վրա. դա վարչության կազմակերպման հարցն է, այն հիմունքը, որով դպրոցը հանվում է կառավարության իրավասության սահմաններից՝ նրան քաղաքականությունից հեռու պահելու համար, սխալ է, որովհետև այն երկրում, որտեղ կա դասակարգային պայքար, որտեղ վարչությունը կազմված պետք է լինի քաղաքական որոշ ուղղություն ունեցող մարդկանցից, այդ դպրոցը անհրաժեշտորեն կտանի քաղաքական կյանքի ժխորի մեջ: Նա առաջարկում է դպրոցը չհանել կառավարության կոմպետենցիայից, որովհետև այդ դեպքում հարցը կապված կլինի մի շարք անհարմարությունների հետ ֆինանսական տեսակետից: Խորհուրդը պնդում է, որ այն դպրոցները, որոնք կհրաժարվեն նպաստ ստանալ կառավարությունից, կառավարությունը պետք է իր ձեռքն առնի, որովհետև այդ դպրոցների մեծ մասը հակառակ պարագայում դատապարտված կլինի փակման: Դպրոցը պետք է մոտ կանգնած լինի հասարակության և այս պատճառով հոգաբարձությանը հրահանգներ պետք է տրվեն պառլամենտից:

Հ[այ] ժ[ողովրդական] կ[ուսակցության] ֆրակցիայի կողմից *պատգամավոր Մխիթարյանը* անում է հետևյալ դիտողությունները, որ դպրոցը կառավարության կոմպետենցիայից հանելով, մենք խառնում ենք պառլամենտի և կառավարության ֆունկցիաները: Դպրոցական վարչությունը պետք է լինի գործադիր մարմին, իսկ պառլամենտը չպետք է ունենա գործադիր ֆունկցիաներ: Նա դեմ է համայնական դպրոցների կազմակերպման, գտնելով, որ այդ տեսակի դպրոցները հեռավոր ապագայի խնդիր են, իսկ այժմ բոլոր պատասխանատվությունը իր վրա պետք է վերցնի կառավարությունը:

Պատգամավոր Ազատյանը նույնպես գտնում է, որ դպրոցը չպետք է հանել կառավարության իրավասության շրջանակներից: Նա քաղաքականությունից հեռու լինել չի կարող, որովհետև պառլամենտն է բնորոշում կառավարության քաղաքականությունը: Նա առաջարկում է դպրոցական հարցը մտցնել արդարադատության մինիստրի ֆունկցիաների մեջ: Դպրոցը պետք է պատկանի տեղական ինքնավարություններին, հենց որ երկրում լայն հիմունքների վրա մտցվի զեմստվո, դպրոցները պետք է անցնեն զեմստվոյին: Կրոնը դպրոցներում չպետք է դասավանդվի. դա անհատի խղճի գործը պետք է լինի, բոլոր առարկաների դասավանդությունը պետք է լինի մայրենի լեզվով, որպեսզի երեխաների ուղեղը չծանրաբեռնվի անհասկանալի բառերով և թվերով:

Պատգ. Զորինը գտնում է, որ վարչության կազմակերպման հարցում կոլեգիալ սկզբունքը միայն կարող է բավարարեցնել Հայաստանում բնակվող բոլոր ժողովուրդներին:

Պատգ. Տիգրանյանը պաշտպանում է կոմիսիայի առաջադրած սկզբունքը, գտնելով, որ որքան հնարավոր է պետք է դպրոցը հեռու պահել քաղաքականությունից: Պետք է հիմնել մի մարմին, որը պետք է զբաղվի զուտ դպրոցական գործերով: Նախքան անցնելը խնդրի հոդված առ հոդված քննության, *պատգ. Ազատյանը* անում է արտակարգ հայտարարություն, որ խորհրդի անցյալ նիստում նա չի մեղադրել ամբողջ հայ զորքը և սպայությունը, այլ խոսել է միայն այն ավազակների մասին, որոնք ավելի հաց են ստանում, քան հարկավոր է և ավելի քիչ տալիս զորքին և դրանով անարխիա մտցնում զորքի մեջ:

Նախագահ Սահակյանը իր կողմից հաստատում է, որ պ. Ազատյանի խոսքերը վերաբերում էին անհատներին և ոչ ամբողջ զորքին:

Առաջարկվում է դպրոցական օրենսգրքի երկրորդ և երրորդ ընթերցումը հետաձգել մյուս նիստին. 28 ձայնով առաջարկն ընդունվում է:

Խորհուրդն անցնում է պարենավորման հարցին:

Պատգամավոր Մելիքյանը գտնում է, որ պարենավորման կոմիսիայի զեկուցման մեջ [բացակայում են] թվական տեղեկություններ այն մասին, թե մեզ, արդյոք, մոտ ապագայում ի՞նչ է սպասվում՝ սո՞վ, թե՞ մի այլ բան: Պատգամավորը կանգ է առնում էական նշանակություն ունեցող մի հարցի վրա: Դա հացահատիկների պետականացումն է: Պարենի հարցին կարելի է տալ երեք լուծում. 1. թույլ տալ ազատ առևտուր, 2. հացահատիկները պետականացնել, 3. ընտրել միջին ճանապարհը, այսինքն՝ թույլ տալ և՛ մեկը, և՛ մյուսը: Ռուսաստանի փորձը ցույց տվեց, որ օրհասական օրերին կառավարությունը պետք է իր ձեռքի տակ առնի պետության մեջ եղած բոլոր մթերքները՝ հավասար և նպատակահարմար ձևով բոլորին բաշխելու համար: Նա գտնում է, որ կառավարությունը իր մենաշնորհի օրինագծով բարձր է այն բոլոր քննադատություններից, որոնք լսվեցին այստեղ աջից և ձախից: Միակ միջոցը՝ գեթ աննշան չափերով թեթևացնելու արդի պարենավորման ճգնաժամը՝ է մենաշնորհը, և ոչ թե ազատ առևտուրը. ազատ առևտուրը մենաշնորհ է միայն մի խումբ սպեկուլյանտների համար:

Պատգ. Մալխասյանը գտնում է, որ որովհետև սննդանյութի միայն 1/3 մասն է պակսել մեր երկրում, ուստի և պնդել, որ բացարձակ սով է լինելու մեզ մոտ՝ թեթևամտություն է: Սով բառը, ասում է նա, մենք ենք հանել ասպարեզ և այսպիսով, պանիկա ստեղծել ժողովրդի մեջ:

(Ձախից մի ձայն. «հոգեբանական սով»): Հասարակությունը չի հավատում իր օրգաններին, իսկ ժողովուրդը՝ իր կառավարությանը, ապա ի՞նչ պետք է անել, հարցնում է պատգամավորը:

(Ձախից մի ձայն. «ազատ առևտուր մտցնել»): Նա առաջարկում է ընտրել միջին ճանապարհը, այն է՝ թույլ տալ ազատ առևտուր, բայց ղեկավարել այդ առևտուրը իր գործոն մասնակցությամբ նրա մեջ:

Ներքին գործոց պ. մինիստրը պաշտպանում է մենաշնորհի սկզբունքը և տալիս է հետևյալ թվական տեղեկությունները.

Մինչև այժմ պետական պահեստը մտել է.

ցորեն	9.223 փութ*
գարի	6.885 փ.
դարման	150.000 փ.
խոտ	152.900 փ.

Մինչև հիմա տրված է զորքին.

ցորեն	15.745 փ.

* Մեկ փութը հավասար է 16,3 կգ:-Ծանոթ. կազմ.:

	գարի	6.885 փ.
	դարման	90.000 փ.
	խոտ	102.000 փ.
Գաղթականներին՝	ցորեն	30.350 փ.
	գարի	310 փ.
Ժողովրդին՝	ցորեն	35.042 փ.
	գարի	13 փ.
Մնում է՝	ցորեն	35.042 փ.
	գարի	52.218 փ.
	դարման	60.000 փ.
	խոտ	80. 200 փ.

Մինիստրի կարծիքով պետական պահեստը դեռ կմտնի 200.000 փ. ցորեն, բացի դրանից միջոցներ են ձեռք առնված՝ արտասահմանից հաց ներմուծելու մեզ մոտ: Ազատ առևտուրը աննպատակահարմար է այն գլխավոր պատճառով, որ պետությունը խալվարը* մի քանի հազար ռուբլով հաց չի կարող գնել և զորքին ու գաղթականությանը կերակրել: Ազատ առևտրի դեպքում մոտիկ ապագայում մեզ սնանկացում է սպասվում:

Պատգամավոր Մելիք-Աղաջանյանը պնդում է, որ պարենավորման կոմիտեն կողմնակից է մոնոպոլիայի, բայց այդ մոնոպոլիան պետք է լավ հիմունքների վրա դրված լինի և կիրառվի որոշ առարկաների նկատմամբ: Օրինակ՝ խաղողը նրա կարծիքով չի կարելի մոնոպոլիայի առարկա դարձնել, որովհետև մենք չունենք միջոցներ՝ հավաքած խաղողը նպատակահարմար ձևով օգտագործելու: Նա հարց է տալիս մինիստրին. ի՞նչ է արված, արդյոք, աղի և կարտոֆիլի վերաբերմամբ:

Ներքին գործոց մինիստրը հայտնում է, որ աղի վերաբերյալ բանակցության մեջ է մտել թուրքերի հետ և հավանական է, որ մոտ ապագայում հնարավոր լինի Արաքս կայարանից մի քանի վագոն աղ ստանալու, իսկ կարտոֆիլի մոնոպոլիայի օրինագիծը մոտ ապագայում կներկայացնե խորհրդին: Դրվում է քվեարկության և անցնում է հետևյալ բանաձևը. ի նկատի ունենալով կարտոֆիլի սեզոնի մոտենալը, կոմիսիան առաջարկում է կառավարությանը՝ մշակել մի օրենսգիծ կարտոֆիլի պետականացման մասին: Առաջարկն անցնում է 25 ձայնով:

Պատգ. Տեր-Հակովբյանը և Ավալբեկյանը Ն[երքին] գ[ործոց] նախարարին տալիս են հարցեր, թե հայտնի՞ է նրան, որ Աթաբեկյանի կալվածներից Տիգրան Մատթեոսյանը ստացել է 200 փութ ցորեն. ի՞նչ միջոցներ են ձեռք առնված դրա դեմ, և որտեղի՞ց պետք է գաղթականները իրենց հասանելիք ցորենը ստանան՝ քաղ[աքային] պարեն[ավորման] բաժանմունքի՞ց, թե ներք. գործ. մինիստրության կից գործող բաժնից:

Ներք. գործ. մինիստրի բացատրություններից հետո խորհուրդն անցնում է սոց.-դեմ[ոկրատների] սեպտեմբերի 1-ի նիստին արած հարցապնդման քննության: *Զինվորական մինիստրը*** հայտնում է, որ անարխիայի առաջն առնելու համար նրա կողմից կիրառված են զանազան միջոցներ, որ Վաղարշապատ են ուղարկված երկու սպաներ կոնտրոլի գործը կազմակերպելու համար, իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե ինտենդանտվոն ավելի հաց է ստանում, քան պետք է զինվորներին, իր կողմից արված են կարգադրություններ՝ քննություն կատարելու զանազան զորամասերում, որից հետո մեղավորները կենթարկվեն պատասխանատվության: Սոց.-հեղափոխականների կողմից պատգ. *Տեր-Հակովբյանը* մինիստրի ուշադրությունը դարձնում է Դիլիջանի շրջանի վրա, որտեղ

* Մեկ խալվարը հավասար է 490 կգ:-Ծանոթ. կազմ.:

** Խոսքը Հովհ.Հախվերդյանի մասին է:-Ծանոթ. կազմ.:

դարձյալ տիրում են անկարգություններ և որի մեղավորը պոլկովնիկ Բաղդասարյանն է, որ ամբողջ շրջանի իշխանությունը իր ձեռքն է առել:

Պատգամավոր Սարգսյանը գտնում է, որ Դիլիջանի զեմստվոյի բողոքը պոլկովնիկ Բաղդասարյանի դեմ չի համապատասխանում իրականության, բոլոր մեղավորները անհատական աստառ ունեն:

Երկար վիճաբանությունից հետո ընդունվում է 14 ձայնով ընդդեմ 9-ի հետևյալ բանաձևը. «Առաջարկել կառավարությանը կտրուկ միջոցներ ձեռք առնել անարխիայի դեմ կռվելու»:

Նիստը փակվում է գիշերվա ժամը 2-ին:

«Կառավարության լրաբեր», 10 սեպտեմբերի 1918թ.